CHAMBER OF ADVOCATES OF RA **CHAMBRE DES AVOCATS DE LA RA**
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ Արտոնագիր 707

ք. Երևան, Հս/Ամտ Վ-3, տ. 106, **harutyunbaghdasaryan.adv@gmail.com**
07.02.2025թ. 009/Դ-25 հեռ. 093-144-282

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Գլխավոր քարտուղար Դավիթ Կարապետյանին
nfo@mfa.am

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Կարապետյան

Հետևյալ ֆեյսբուքյան հասցեով ինձ է դիմել Վարդան Հակոբյանը. **Vardan Hakobyan https://www.facebook.com/vardan093333060/posts/pfbid035q5oWFh7yu9vGMdeGX4G6CuGAaYGy1qBd9yXNWQwEVE3VEpibrNjvxtD2EPXJq2Vl?notif_id=1738861240546172&notif_t=mention&ref=notif 1 ч.** ·

Vardan Hakobyan

«Աննա Չաուշեսկուն կյանքի վերջին վայրկյաններին չէր հավատում իր աչքերին ու ականջներին, երբ իրեն հավատարիմ ծառայող զինվորականներն արագացված կարգով կարդացին իրենց ուղղված մեղադրանքները և որոշեցին մահապատժի ենթարկել իշխանությունն ուզուրպացրած Չաուշեսկու զույգին:

Աննա Հակոբյանը նախ՝ ավելին է իր վրա վերցրել, քան դրա իրավունքը ունի, երկրորդը՝ բացահայտ մասնակիցն է եղել Հայաստանի դեմ տարված համակողմանի դավաճանական գործողությունների ոչ միայն Արցախում, այլ նաև Հայաստանում ու դրա սահմաններից դուրս:

2023 թվի սեպտեմբերի 17 ին, Արցախի վրա հարձակումից առաջ Մախաչկալայում իր ունեցած հանդիպման մասին մենք ոչինչ չգիտեինք, բայց ամեն ինչ ժամկետ ունի. և մի օր անպայման ինչ-որ մի հետաքրքրված կողմ դա բացահայտելու քաղաքական առիթ ունենալու է անպայման:

Ամեն ինչ պարզ է, մանրամասները գալու են լրացնելու»:

«Հարգելի **Հարություն Բաղդասարյան**, խնդրում եմ պարզաբանել. Արդյո՞ք տվյալ փաստաթուղթ իրական է թե ոչ, եթե այո, խնդրում եմ նաև ճշտել, թե ինչ հիմքով է Աննա Հակոբյանին տրվել Դիվանագիտական անձնագիր: Շնորհակալ եմ»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների դիմում եմ Ձեզ և ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ սահմանված կարգով խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություն հետևյալի մասին.

- Ըստ ստորև ներկայացված փաստաթղթի, 2023թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ Աննա Հակոբյանին տրվել դիվանագիտական անձնագիր: Եթե այդ փաստաթուղթը կեղծված չէ, ապա՝

- արդյո՞ք Ա. Հակոբյանի վրա տարածվում են «**Դիվանագիտական ծառայության մասին**» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ **Արտաքին գործերի նախարարի** 2010 թ. դեկտեմբերի 29-ի 2/757-ն հրամանի 1-ին հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի (ուժը կորցրած) դրույթները:

-



Выезд/Выезд Выезд

ФИО АКОБЯН АННА

Пол Женский

Дата рождения 01.02.1978

Гражданство Армения

Документ Дипломатический паспорт иностранного гражданина

Номер документа AD0009024

Заявленная цель визита Частная

Дата въезда 17.09.2023

КПП въезда MAXAYKALA (ABHA)

Дата выезда 30.09.2023

-

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Պատրաստ եմ վճարել տեղեկատվության հետ կապված ծախսերը:

Հարգանքով՝ փաստաբան  Հարություն Բաղդասարյան